



ԿԱՄԱՍՈՒՏՐԱ

Վաթիլյանա



कामसूत्र वात्स्यायन

कामसूत्र वात्स्यायन

ԿԱՄՍՄՈՒՏՐՈՎ ՎԱՏՏՅԱՅԱՆ

Թարգմանիչ՝ Լիլիթ Մկրտչյան
Երևան, 2026 թ.

NovusLiber

Yerevan, 2026

ՅՏԴ 613.88:316.367

ԳՄԴ 57.01+60.561.54

Վ 146

Armenian translation © 2026 Lilit Mkrtchyan

Հայերեն թարգմանություն © 2026 Լիլիթ Մկրտչյան

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Սույն գրքի որևէ մաս չի կարող վերարտադրվել, պահվել տեղեկատվական համակարգերում կամ փոխանցվել որևէ ձևով կամ միջոցներով (էլեկտրոնային, մեխանիկական, ձայնագրման, լուսապատճենահանման և այլն) առանց հրատարակչի գրավոր թույլտվության, բացառությամբ տեղեկատվական նպատակներով արվող կարճ մեջբերումների՝ հեղինակի կամ թարգմանչի անվան հստակ նշմամբ:

ISBN 978-9939-9381-9-6 (էլ. հրատ.)

ISBN 978-9939-9381-8-9 (տպագիր)

ISBN 978-9939-9381-8-9



9 789939 938189

कामसूत्र वास्यायन

ԿԱՄԱՍՈՒՏՐԱ ՎԱԹՍՅԱՅԱՆԱ

«Կամասուտրա»-ն հին հնդկական մշակույթի ամենահայտնի և ազդեցիկ աշխատություններից մեկն է, որն ավանդաբար վերագրվում է մտածող և հեղինակ Մալանագա Վաթսյայանային: Չնայած ժամանակակից ընկալման մեջ այն հաճախ ներկայացվում է միայն որպես սիրային կյանքի ուսումնասիրության ձեռնարկ, իրականում ստեղծագործությունը բազմաշերտ փիլիսոփայական և սոցիալական աշխատություն է, որն անդրադառնում է մարդու զգայական, ընտանեկան և հասարակական կյանքի ներդաշնակ կազմակերպմանը:

Գիրքը ներկայացնում է սիրո, ամուսնության, հարաբերությունների կառուցման, հասարակական վարքագծի և ընտանեկան կյանքի մշակութային նորմերը՝ հին հնդկական մտածողության և աշխարհայացքի համատեքստում:

Գիրքը կարևոր աղբյուր է ոչ միայն մշակութաբանական և պատմական ուսումնասիրությունների, այլև մարդկային հարաբերությունների ձևավորման ավանդական պատկերացումները հասկանալու համար:

Սույն հրատարակությունը ներկայացնում է աշխատության հայերեն թարգմանությունը, որը կատարվել է տարբեր բնագրային աղբյուրների համադրությամբ և լեզվական ու մշակութային հարմարեցմամբ: Գրքում ներառված են նաև թարգմանչական ծանոթագրություններ, որոնք բացատրում են որոշ պատմամշակութային իրողություններ, սոցիալական

ավանդույթներ և տերմինաբանական առանձնահատկություններ՝ ձգտելով նպաստել տեքստի լիարժեք ընկալմանը:

Գիրքը նախատեսված է հին մշակույթների, փիլիսոփայության, մարդաբանական և հասարակագիտական ուսումնասիրություններով հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանակի համար:

Թարգմանված է սանսկրիտից անգլերեն Սըր Ռիչարդ Ֆրենսիս Բարթոնի (1883 թ.) կատարած թարգմանության հիման վրա:

Խմբագրական նշում

Սույն հրատարակության թարգմանությունը կատարվել է մեծ ուշադրությամբ և խնամքով՝ ձգտելով հնարավորինս հավատարիմ մնալ բնագրի իմաստին, կառուցվածքին և գաղափարական ընթացքին՝ միաժամանակ պահպանելով հայերենի բնական հնչողությունն ու գրական արժանապատվությունը:

Տերմինաբանական և ոճական լուծումները ընտրվել են գիտակցաբար՝ հաշվի առնելով թե՛ բնագրի ներքին տրամաբանությունը, թե՛ հայերեն գրական ավանդույթը:

Թարգմանության նպատակն է եղել ստեղծել այնպիսի տեքստ, որը հայերենում կընթերցվի բնական և ամբողջական՝ առանց արհեստական «թարգմանվածության» զգացողության:

Միևնույն ժամանակ, ցանկացած թարգմանություն անխուսափելիորեն կրում է թարգմանչի լեզվական մտածողության և մեկնողական ընտրությունների հետքը: Այդ պատճառով «Novus Liber» հրատարակչությունը այս աշխատանքը դիտում է որպես հեղինակային թարգմանություն՝ իրականացված լեզվական և մեկնողական ինքնուրույն մոտեցմամբ:

Ընթերցողներին և հետազոտողներին առաջարկվում է այն դիտարկել որպես թարգմանության հնարավոր տարբերակներից մեկը՝ բաց համեմատության, քննարկման և մեկնությունների համար:

Գրական լեզուն կենդանի համակարգ է, և որևէ հրատարակություն չի կարող հավակնել բացարձակ կատարելության:

Եթե ուշադիր ընթերցողները նկատեն տառասխալներ կամ տեխնիկական վրիպումներ, հրատարակչությունը միայն երախտագիտությամբ կընդունի դրանց վերաբերյալ տեղեկությունները՝ info@novusliber.com հասցեով:

Թարգմանչի խոսքը

Այս գիրքը հաճախ ընկալվում է որպես էրոտիկ բնույթի աշխատություն, սակայն, նման մոտեցումը սահմանափակ է և պատմականորեն սխալ:

Վաթսայայանայի «Կամասուտրան» հինդու մտքի այն դասական աշխատություններից է, որտեղ սիրո, մտերմության և մարդկային հարաբերությունների թեմաները ներկայացված են ոչ թե զգայական գրգռման, այլ գիտելիքի, դիտարկման և հավասարակշռության տեսանկյունից: Այն ստեղծվել է մի մշակութային միջավայրում, որտեղ մարդկային կյանքի բոլոր կողմերը՝ հոգևորն ու մարմնականը, դիտվում էին որպես մեկ ամբողջության բաղադրիչներ:

Վաթսայայանայի համար սերը միայն զգացմունք կամ կիրք չէ: Այն մարդկային վարքի, հարաբերությունների և փոխըմբռնման արվեստ է, որը ենթարկվում է որոշակի օրենքների, պայմանավորված է խառնվածքով, միջավայրով, տարիքով և հասարակական կարգավիճակով: «Կամասուտրան» կառուցված է համակարգված ձևով, բաժանված է մասերի, գլուխների և կարճ աֆորիզմների, որոնք նպատակ ունեն ոչ թե հրահանգելու, այլ բացատրելու և նկարագրելու:

Ժամանակակից ընթերցողի համար այս աշխատությունը կարող է միաժամանակ զարմացնող, օտար և հետաքրքրական թվալ: Այն պարունակում է պատկերացումներ և դասակարգումներ, որոնք ձևավորվել են այլ դարաշրջանում և այլ արժեհամակարգի շրջանակում: Սակայն, հենց այդ

տարբերությունն է, որ գիրքը դարձնում է արժեքավոր. քանզի այն հնարավորություն է տալիս դիտարկել մարդկային հարաբերությունները մեկ այլ մշակութային հայելու մեջ և հասկանալ, թե որքան բազմազան են եղել սիրո ընկալումները պատմության ընթացքում:

Այս հրատարակության նպատակն է ընթերցողին ներկայացնել Վաթայայանայի աշխատությունը որպես հինդու դասական գրականության և մշակութային ժառանգության մաս՝ առանց ժամանակակից մեկնաբանությունների կամ բարոյական գնահատականների պարտադրանքի: Տեքստը ներկայացված է հնարավորինս մոտ՝ Սըր Ֆրենսիս Ռիչարդ Բարթոնի 1883 թվականին սանսկրիտից անգլերեն արված թարգմանությանը, առանց ուղեկցող լեզվաբանական մեկնաբանությունների, որպեսզի ընթերցողը հնարավորություն ունենա ինքնուրույն ձևավորել իր վերաբերմունքը:

«Կամասուտրան» գիրք է գիտելիքի, ոչ թե սիրային հրապույրի կամ վարպետության մասին: Այն խոսում է մարդկանց զգացմունքային փոխհարաբերությունների պատասխանատվության մասին՝ մի լեզվով, որը ձևավորվել է դարեր առաջ, բայց շարունակում է մնալ ընթերցելի և մտածելու տեղիք է տալիս նաև այսօր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|----|
| Նախաբան..... | 2 |
| Մաս I. Ներածական..... | 9 |
| Գլուխ 1. Աշխատության գլուխների համառոտ անվանակարգումը..... | 9 |
| Գլուխ 2. Դատողություններ առաքինության, հարստության և սիրո երեք աշխարհիկ նպատակների մասին..... | 13 |
| Գլուխ 3. Ուսումնասիրության ենթակա արվեստների և գիտությունների մասին..... | 21 |
| Գլուխ 4. Տան ներքին կազմակերպման, կացարանի կահավորման և քաղաքացու առօրյա կյանքի, նրա ընկերակիցների ու ժամանցի մասին ^[1,2] | 30 |
| Գլուխ 5. Մերձենալու համար պատշաճ և ոչ պատշաճ կանանց, ինչպես նաև ընկերների և միջնորդների մասին..... | 40 |
| Մաս II. Սիրային մերձեցման մասին..... | 49 |
| Գլուխ 1. Մերձեցման տեսակներն ըստ մարմնի չափերի, ցանկության ու ժգնության և տևողության..... | 49 |
| Գլուխ 2. Գրկախառնությունների մասին..... | 59 |
| Գլուխ 3. Համբույրների մասին..... | 66 |
| Գլուխ 4. Մատներով ու եղունգներով սեղմելու և հետքեր թողնելու մասին..... | 71 |
| Գլուխ 5. Կծելու, ատամներով գուրգուրելու և տարբեր երկրամասերի կանանց հետ սիրախաղի ձևերի մասին..... | 77 |
| Գլուխ 6. Պարկելու ձևերի և մերձեցման եղանակների մասին..... | 83 |
| Գլուխ 7. Գուրգուրանքով հարվածների տեսակների և դրանց համապատասխանող ձայների ու հառաչանքների մասին..... | 90 |
| Գլուխ 8. Կնոջ կողմից տղամարդու դերի վերարտադրության մասին..... | 96 |

| | |
|--|-----|
| Գլուխ 9. Բերանով մերձեցման մասին | 102 |
| Գլուխ 10. Մերձեցման սկսելու և ավարտելու եղանակների, ինչպես նաև մերձեցման տեսակների և սիրային վիճաքանությունների մասին | 109 |
| Մաս III. Ամուսնության մասին | 116 |
| Գլուխ 1. Դատողություններ խնամախոսության և ամուսնության մասին | 116 |
| Գլուխ 2. Աղջկա մոտ վստահություն ձևավորելու մասին | 122 |
| Գլուխ 3. Սիրահետման և զգացմունքների արտահայտման ձևերի մասին | 128 |
| Գլուխ 4. Տղամարդուն և կնոջը հատուկ վարքագծի և միմյանց գրավելու միջոցների մասին | 134 |
| Գլուխ 5. Ամուսնության տեսակների մասին | 141 |
| Մաս IV. Ամուսնացած կնոջ մասին | 148 |
| Գլուխ 1. Առաքինի կնոջ կենսակերպի և ամուսնու բացակայությամբ նրա վարքագծի մասին | 148 |
| Գլուխ 2. Ամուսնու մյուս կանանց նկատմամբ ավագ կնոջ պահվածքի մասին, կրոներ կնոջ պահվածքի, ինչպես նաև կրկին ամուսնացած կույս այրու, ամուսնու համակրանքը կորցրած կնոջ, արքայական հարեմի կանանց մասին, և բավականության պայմաններում տղամարդու պահվածքի մասին: | 155 |
| Մաս V. Ուրիշ տղամարդկանց կանանց մասին | 165 |
| Գլուխ 1. Տղամարդկանց և կանանց բնավորությունների, ինչպես նաև սիրահետումները մերժելու պատճառների մասին | 165 |
| Գլուխ 2. Կանանց հետ ծանոթանալու և նրանց նվաճելու միջոցների մասին | 174 |
| Գլուխ 3. Կնոջ մտածելակերպի վերլուծությունը | 180 |
| Գլուխ 4. Միջնորդի դերի մասին | 185 |

| | |
|---|-----|
| Գլուխ 5. Ուրիշ տղամարդկանց կանանց նկատմամբ իշխանավոր մարդու տածած սիրո մասին..... | 196 |
| Գլուխ 6. Արքայական հարեմի կանանց և սեփական կնոջը գոհացնելու մասին | 203 |
| Մաս VI. Տարփուլի հարձերի և մարմնավաճառների մասին | 212 |
| Գլուխ 1. Տարփուլիների կողմից տղամարդ ընտրելու դրդապատճառների և ցանկալի տղամարդուն գրավելու մասին | 212 |
| Գլուխ 2. Տարփուլու կյանքի մասին | 221 |
| Գլուխ 3. Փող ձեռք բերելու միջոցների և սիրեկանից ապատվելու եղանակների մասին | 228 |
| Գլուխ 4. Նախկին սիրեկանի հետ կրկին միանալու մասին | 236 |
| Գլուխ 5. Տարբեր օգուտների մասին | 243 |
| Գլուխ 6. Օգուտների, կորուստների և կասկածների մասին, ինչպես նաև տարփուլիների տեսակների մասին | 250 |
| Մաս VII. Համակրանք ներշնչելու արվեստը..... | 261 |
| Գլուխ 1. Անձնական հարդարանքի և բուսական դեղամիջոցների մասին | 261 |
| Գլուխ 2. Ցանկությունը բորբոքելու միջոցների և տարբեր խորհուրդների մասին | 269 |
| Եպրափակիչ խոսք | 278 |
| Ծանոթագրություններ | 284 |

Նախաբան

Քաղվածք Ռիչարդ Ֆրենսիս Բարթոնի նախաբանից

Բոլոր ժողովուրդների գրականություններում հանդիպում են աշխատություններ, որոնք նվիրված են սիրո և սիրային հարաբերությունների նկարագրությանը: Յուրաքանչյուր մշակույթ այս թեմային մոտենում է յուրովի:

Այս աշխատությունը ներկայացնում է սանսկրիտական գրականության մեջ հայտնի մի կարևոր երկի՝ «Կամասուտրայի» («Սիրո աֆորիզմներ») թարգմանությունը, որը վերագրվում է Մալանագա Վաթսյայանային: Այն համարվում է հնդկական էրոտիկ գրականության ամենանշանավոր աշխատություններից մեկը:

Կամասուտրայից բացի, կան նույն թեմային նվիրված մի շարք այլ ստեղծագործություններ, ինչպիսիք են «Ռաթիրահայա» կամ «Սիրո գաղտնիքները», «Պանչասակյա» կամ «Հինգ աղեղները», «Սմարա Պրադիպա» կամ «Սիրո լույսը», «Ռաթիմանջարի» կամ «Սիրային ծաղկեշղթա», «Ռասմանջարի» կամ «Սիրո ծիլը» և «Անանգա Ռանգա» կամ «Սիրո վիճակը», որը կոչվում է նաև «Կամալեդիփլավա» կամ «Նավը սիրո օվկիանոսում»: Այս աշխատությունները տարբեր ժամանակներում գրել են սիրո արվեստի պատկերացումների վերաբերյալ:

Այս գրականության մեջ տղամարդիկ և կանայք հաճախ դասակարգվում են տարբեր տեսակների՝ ըստ բնույթի և վարքի:

Այդ դասակարգումները ներկայացվում են բավականին պարզ և գործնական ձևով՝ հիշեցնելով բնագիտության մեջ կիրառվող համակարգումները:

Այս թեմայի վերաբերյալ բազմաթիվ ժամանակակից ուսումնասիրություններ նույնպես անդրադառնում են սիրային հարաբերություններին՝ հոգեբանական և կենսաբանական տեսանկյուններից: Ուստի նման աշխատությունների ուսումնասիրությունը չի հակասում գիտական հետաքրքրությանը, այլ ընդհակառակը՝ լրացնում է մարդկային կյանքի մասին մեր պատկերացումները:

Ընթերցողների համար հետաքրքիր կարող է լինել նաև, թե ինչպես է հայտնաբերվել Վաթայայանայի աշխատությունը և առաջին անգամ թարգմանվել անգլերեն:

Երբ հինդու փանդիտները աշխատում էին «Անանգա Ռանգա»-ի վրա, նրանք հաճախ հանդիպում էին հզումների Վաթայայանա անունով հեղինակին: Սա հետաքրքրություն առաջացրեց, և նրանք սկսեցին ձեռագրեր որոնել տարբեր սանսկրիտական գրադարաններում՝ Բենարեսում, Քալքատայում և այլուր:

Գտնված օրինակները համեմատվեցին միմյանց հետ, և «Չայամանգլա» մեկնության օգնությամբ կազմվեց աշխատության առավել ամբողջական մի տարբերակ, որը 1883 թվականին թարգմանվեց սըր Ռիչարդ Բարթոնի կողմից:

Վաթայայանայի աշխատությունը բաղկացած է յոթ մասից, երեսունվեց գլուխներից և վաթսունչորս բաժիններից: Յեղինակի

մասին տեղեկությունները սակավ են, սակայն ենթադրվում է, որ նա ապրել է մեր թվարկության առաջին և վեցերորդ դարերի միջև:

Աշխատությունը նպատակ ունի սովորեցնել մարդուն տիրապետել իր զգացմունքներին և հավասարակշռություն պահպանել Դհարմայի, Արթայի և Կամայի միջև:

Կնոջ կերպարը հինդու գրականության մեջ

Բոլոր հինդու ձեռագրերում կինը ներկայացվում է որպես «շակտի»՝ աստվածային ստեղծագործական ուժի կրողն ու դրսևորումը: Հինդու դիցաբանության և փիլիսոփայության մեջ կինը մարմնավորում է այն ստեղծագործական գորությունը, որով Արարիչը ձևավորել է տիեզերքը:

Կնոջը վերագրվում են այնպիսի աստվածային հատկություններ, ինչպիսիք են սերը, առաքինությունը, հոգեկան ուժը, գեղեցկությունն ու գիտակցված գոհաբերությունը: Միաժամանակ, նրան վերագրվում են նաև խանդն ու մրցակցությունը՝ որպես բնական հատկանիշներ, որոնք նպաստում են գոյատևմանը և սերնդի շարունակությանը: Ըստ այդ պատկերացումների՝ տղամարդը ստեղծվել է ֆիզիկապես ավելի ուժեղ, սակայն առանց նույն ստեղծագործական գորության՝ առաջին հերթին կնոջը պաշտպանելու նպատակով: Ուստի կինը դիտվում է որպես հարգանքի, հոգատարության և արժանապատիվ վերաբերմունքի արժանի էակ:

Յինդու ավանդույթի համաձայն՝ վեդայական ժամանակաշրջանը երբեմն ներկայացվում է որպես մայրիշխանական («մատրա-սատտատմակ») շրջան: Այդ մշակութային համակարգում կանայք դասակարգվում էին մի քանի տիպերի՝ ըստ իրենց բնույթի և առանձնահատկությունների, որոնցից առավել հայտնի են՝ Փադմինի, Չիտրանի, Յասթինի, Շանքինի, Սադմինի և Մետրայինի տեսակները:

Ստորև ներկայացվում են այդ դասակարգումներից մի քանիսի համառոտ բնութագրերը:

Փադմինի (Լոտու կին) – համարվում է հազվագյուտ և իդեալական տիպ: Նա նրբակազմ է, գեղեցկատես և նրբաճաշակ: Բնութագրվում է համեստությամբ, մեղմությամբ և ներքին հավասարակշռությամբ: Իր վարքով և խոսքով կարող է գրավել թե՛ իմաստուններին, թե՛ շրջապատողներին:

Չիտրանի (Արվեստի կին) – սլացիկ կազմվածքով, զարդարվելու և գեղեցկանալու հակվածությամբ կին է: Նա հաճախ օժտված է ստեղծագործական ունակություններով, հավատարիմ և հոգատար է, սակայն չի սիրում ծանր աշխատանք: Բնութագրվում է աշխույժ բնավորությամբ և արտահայտիչ խոսքով:

Յասթինի (Փիղ կին) – առողջ և մարմնեղ կառուցվածքով կին է: Սիրում է հարմարավետ կյանքը և լավ ուտեստները: Յաճախ հակված է վստահելու ուրիշների որոշումներին, հատկապես ընտանիքի ներսում: Միաժամանակ հյուրընկալ է, խաղաղասեր և կենսուրախ:

Շանքինի (Մարգարտախեցի կին) – բարձրահասակ, ինքնավստահ և ուժեղ բնավորությամբ կին է: Աչքի է ընկնում անկախությամբ, սրամտությամբ և ներքին ուժով: Հակված է առաջնորդելու և հաճախ գերիշխող դեր ունի հարաբերություններում:

Սաղմինի (Երկշուտ կին) – համեստ, ամաչկոտ և զգայուն բնավորության տիպ է: Թեև արագ է վախենում, միևնույն ժամանակ կենսուրախ է և ձգտում է հաճելի միջավայր ստեղծել ընտանիքում:

Մետրայինի (Դժբախտ կին) – արտաքինով գրավիչ և արտահայտիչ տիպ է, սակայն հաճախ բախվում է դժվարությունների անձնական կյանքում: Աշխատասեր է, բայց նրա ընտանեկան հարաբերությունները հաճախ լինում են բարդ և հակասական:

Կամաստուրայի ծագումն ու կազմավորումը

Հին հնդկական ավանդության համաձայն՝ աշխարհի Արարիչը սկզբում ստեղծեց տղամարդուն և կնոջը և նրանց փոխանցեց մարդկային կյանքի կարգավորման օրենքները՝ Դհարմայի^[1] (բարոյական կարգի), Արթհայի^[2] (աշխարհիկ բարեկեցության) և Կամայի^[3] (զգայական հաճույքի) միջոցով:

Այս սկզբունքները հետագայում համակարգվեցին տարբեր իմաստունների կողմից: Դհարմային վերաբերող ուսմունքները ձևակերպեց Մանուն, Արթհային վերաբերողը՝ Բրիհասպիաթին,

իսկ Կամային՝ սիրո արվեստին վերաբերող գիտելիքը, մշակվեց առանձին ավանդույթի շրջանակում:

Ըստ այդ ավանդության՝ սիրո մասին ուսմունքը սկզբում ներկայացվել է ընդարձակ տեսքով, ապա աստիճանաբար համառոտագրվել և վերամշակվել տարբեր հեղինակների կողմից: Այդ գործընթացի արդյունքում այն բաժանվել է թեմատիկ մասերի, որոնք վերաբերում են սիրային հարաբերությունների տարբեր կողմերին՝ ընդհանուր սկզբունքներից մինչև ամուսնական կյանք, սիրախաղի ձևեր և հասարակական հարաբերություններ:

Ժամանակի ընթացքում այս նյութը դարձավ մասնատված և դժվարամատչելի: Այդ պատճառով Վաթայայանան ձեռնարկեց այն հավաքել, համակարգել և ներկայացնել ավելի սեղմ ու ամբողջական ձևով՝ ամփոփելով նախորդ հեղինակների գաղափարները:

Այսպես ձևավորվեց «Կամասուտրան» կամ «Սիրո աֆորիզմները»՝ ոչ միայն որպես մեկ հեղինակի աշխատություն, այլ որպես երկարատև մտավոր և մշակութային ավանդույթի արդյունք:



Մաս I. Ներածական

Գլուխ 1. Աշխատության գլուխների համառոտ անվանակարգումը

Մաս I. Ներածական տեղեկություններ

- Գլուխ 1. Աշխատության գլուխների համառոտ անվանակարգումը
- Գլուխ 2. Դատողություններ առաքինության, հարստության և սիրո երեք աշխարհիկ նպատակների մասին
- Գլուխ 3. Ուսումնասիրության ենթակա արվեստների և գիտությունների մասին
- Գլուխ 4. Տան ներքին կազմակերպման, կացարանի կահավորման և քաղաքացու առօրյա կյանքի, նրա ընկերակիցների ու ժամանցի մասին
- Գլուխ 5. Մերձենալու համար պատշաճ և ոչ պատշաճ կանանց, ինչպես նաև ընկերների և միջնորդների մասին

Մաս II. Սիրային մերձեցման մասին

- Գլուխ 1. Մերձեցման տեսակներն ըստ մարմնի չափերի, ցանկության ուժգնության և տևողության
- Գլուխ 2. Գրկախառնությունների մասին
- Գլուխ 3. Համբուլյրների մասին
- Գլուխ 4. Մատներով ու եղունգներով սեղմելու և հետքեր թողնելու մասին

- Գլուխ 5. Կծելու, ատամներով գուրգուրելու և տարբեր երկրամասերի կանանց հետ սիրախաղի ձևերի մասին
- Գլուխ 6. Պռակելու ձևերի և մերձեցման եղանակների մասին
- Գլուխ 7. Գուրգուրանքով հարվածների տեսակների և դրանց համապատասխանող ձայների ու հառաչանքների մասին
- Գլուխ 8. Կնոջ կողմից տղամարդու դերի վերարտադրության մասին
- Գլուխ 9. Բերանով մերձեցման մասին
- Գլուխ 10. Մերձեցման սկսելու և ավարտելու եղանակների, ինչպես նաև մերձեցման տեսակների և սիրային վիճաբանությունների մասին

Մաս III. Ամուսնության մասին

- Գլուխ 1. Դատողություններ խնամախոսության և ամուսնության մասին
- Գլուխ 2. Աղջկա մոտ վստահություն ձևավորելու մասին
- Գլուխ 3. Սիրահետման և զգացմունքների արտահայտման ձևերի մասին
- Գլուխ 4. Տղամարդուն և կնոջը հատուկ վարքագծի և միմյանց գրավելու միջոցների մասին
- Գլուխ 5. Ամուսնության տեսակների մասին

Մաս IV. Ամուսնացած կնոջ մասին

- Գլուխ 1. Առաքինի կնոջ կենսակերպի և ամուսնու բացակայությամբ նրա վարքագծի մասին
- Գլուխ 2. Ամուսնու մյուս կանանց նկատմամբ ավագ կնոջ պահվածքի մասին, կրտսեր կնոջ պահվածքի, ինչպես նաև կրկին ամուսնացած կույս այրու, ամուսնու համակրանքը կորցրած կնոջ, արքայական հարեմի կանանց մասին, և բազմակնության պայմաններում տղամարդու պահվածքի մասին

Մաս V. Ուրիշ տղամարդկանց կանանց մասին

- Գլուխ 1. Տղամարդկանց և կանանց բնավորությունների, ինչպես նաև սիրահետումները մերժելու պատճառների մասին
- Գլուխ 2. Կանանց հետ ծանոթանալու և նրանց նվաճելու միջոցների մասին
- Գլուխ 3. Կնոջ մտածելակերպի վերլուծությունը
- Գլուխ 4. Միջնորդի դերի մասին
- Գլուխ 5. Ուրիշ տղամարդկանց կանանց նկատմամբ իշխանավոր մարդու տաճած սիրո մասին
- Գլուխ 6. Արքայական հարեմի կանանց և սեփական կնոջը գոհացնելու մասին

Մաս VI. Տարփուհիների մասին

- Գլուխ 1. Տարփուհիների կողմից տղամարդ ընտրելու դրդապատճառների և ցանկալի տղամարդուն գրավելու մասին
- Գլուխ 2. Տարփուհու կյանքի մասին
- Գլուխ 3. Փող ձեռք բերելու միջոցների և սիրեկանից ազատվելու եղանակների մասին
- Գլուխ 4. Նախկին սիրեկանի հետ կրկին միանալու մասին
- Գլուխ 5. Տարբեր օգուտների մասին
- Գլուխ 6. Օգուտների, կորուստների և կասկածների, ինչպես նաև տարփուհիների տեսակների մասին

Մաս VII. Համակրանք ներշնչելու արվեստը

- Գլուխ 1. Անձնական հարդարանքի և բուսական դեղամիջոցների մասին
- Գլուխ 2. Ցանկությունը բորբոքելու միջոցների և տարբեր խորհուրդների մասին

Գլուխ 2. Դատողություններ առաքինության, հարստության և սիրո երեք աշխարհիկ նպատակների մասին

Ողջույնի խոսք Դհարմայի, Արթհայի և Կամայի^[4] մասին:

Մարդը, որի կյանքը տևում է մոտավորապես հարյուր տարի, պետք է կյանքի տևողության ընթացքում տարբեր ժամանակներում համաչափորեն զբաղվի Դհարմայի, Արթհայի և Կամայի ոլորտներում անձնական նվաճումներ ձեռք բերելով, ընդ որում այնպես, որ կյանքն ընթանա ներդաշնակության մեջ:

Մարդը պետք է ուսանի և գիտելիքներ ձեռք բերի մանկության և պատանեկության տարիներին, երիտասարդ և միջին տարիքում պետք է զբաղվի Արթհայի և Կամայի գործնական կիրառմամբ, իսկ կյանքի հասուն տարիքում պետք է նվիրի իրեն Դհարմայի կատարմանը, և այդպիսով կյանքի տևողության ընթացքում հասնի Մոքշայի, այսինքն ազատի իր հոգին հետագա վերածնունդներից: Կամ, հաշվի առնելով կյանքի անկանխատեսելի անորոշությունները, զբաղվի այդ երեք ոլորտների գործողություններով իր կյանքի այն ժամանակաշրջաններում, երբ դրանցով զբաղվելն առավել վայելք ու բավարարություն է բերում նրան: Սակայն, մի բան պետք է անպայման յուրացվի, որ մարդը պետք է առաքինի ուսանողի կյանք վարի այնքան ժամանակ, քանի դեռ չի ավարտել ուսումը:

Դհարման մարդու հոգևոր ուսմունքն է, հավատարմությունն ու հնազանդությունը Շաստրային կամ հինդուների Սուրբ գրքերի պատվիրաններին, որոնք մարդուց պահանջում են կյանքի ընթացքում որոշակի ավանդական և

արարողակարգային գործողություններ կատարել, ինչպես օրինակ՝ գոհաբերություններ և նվիրատվություններ, որոնք սովորաբար աշխարհիկ կյանքի հետ առնչություն չունեն և, որովհետև դրանց անմիջական ազդեցությունը տեսանելի չէ, ինչպես նաև պահանջում է ձեռնպահ մնալ որոշակի գործողություններից, ինչպես օրինակ միս ուտելուց, ինչը մարդիկ հաճախ անում են, որովհետև դա ընդունված է աշխարհիկ կյանքում և, որովհետև դրա հետևանքներն անմիջականորեն տեսանելի ու զգալի են: Դիարման պետք է ուսանել Շրուտիից (Սուրբ գրքից) և նրանցից, ովքեր գիտակ են դրանից:

Արթհան աշխարհիկ կյանքում կատարողական հմտությունների և նյութական հարստության ձեռքբերումն է, ինչպես արվեստի գործերը, հողը, ոսկին, կենդանիների հոտերը, կացարանները, փոխադրամիջոցները և աշխարհիկ ընկերները: Ներդաշնակության համար մարդն այնուհետև շարունակում է կիրառել իր գիտելիքներն ու հմտությունները՝ արդեն ձեռք բերած նյութական կարողությունը պահպանելու և բազմապատկելու համար: Արթհայի կանոնները պետք է ուսանել պետական ծառայողներից, և առևտրի մեջ հմուտ վաճառականներից:

Կաման համապատասխան առարկաների կամ գոյերի հետ շփումից վայելք ստանալու կարողությունն է, որը բխում է մարդու հինգ զգայարաններից. և դրանք են. լսողությունը, շոշափողական զգացողությունը, տեսողությունը, համի զգացողությունը և հոտառությունը՝ ուղղորդված և ընկալված մտքի ու հոգու ներդաշնակ կարողությունների համադրությամբ:

Այս փոխհարաբերության յուրահատուկ բաղադրիչը մարդու համապատասխան զգայարանի և վայելքի առարկայի կամ գոյի